ISSN 1829-0361

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

2(12)

HISTORY MUSEUM OF ARMENIA

PROCEEDINGS
OF THE HISTORY MUSEUM OF ARMENIA

№2(12)

МУЗЕЙ ИСТОРИИ АРМЕНИИ

ТРУДЫ МУЗЕЯ ИСТОРИИ АРМЕНИИ

№2(12)

YEREVAN 2023 ЕРЕВАН

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

№ 2(12)

ԵՐԵՎԱՆ 2023

Տպագրվում է Հայաստանի պատմության թանգարանի գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակվում է 1948 թվականից

Խմբագրական խորհուրդ՝

Նժդեհ Երանյան. *պ. գ. թ. – նախագահ,*
Հայկ Նազարյան, *պ. գ. թ. – պատասխանատու քարտուղար*
Արա Սանճեան, *PhD* (*ԱՄՆ*), Արսեն Բոբոխյան, *պ. գ. թ.*,
Համլետ Պետրոսյան, *պ. գ. դ., պրոֆեսոր*, Համո Սուքիասյան,
պ. գ. թ., դոցենտ, Հարություն Մարության, *պ. գ. դ.*, Հռիփսիմե
Պիկիչյան, *պ. գ. թ., դոցենտ*, Հրաչ Չիլինկիրեան, *PhD* (*Մեծ
Բրիտանիա*), Մխիթար Գաբրիելյան, *պ. գ. թ., դոցենտ*,
Պավել Ավետիսյան, *պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*,
Ռոբերտո Դան, *PhD* (*Իտալիա*), Ռուբեն Վարդանյան, *պ. գ. թ.*,
Տորք Դալալյան, *բ. գ. թ.*

ISSN 1829–0361

© Հայաստանի պատմության թանգարան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Դրամագիտություն

Ալեքսանդր Հակոբյան

Արխիպելագից դեպի մայրցամաք. «Հայաստանի դրամագիտություն» հասկացության շրջանակը (*ռուս.*) 8

Ժակ Նուրպեկրլեան

Հին դրամների՝ պատմական և աշխարհագրական տեղեկությունները ստուգելու ունակությունը (*անգլ.*) 23

Հասմիկ Մարգարյան

Հայաստանի անձնավորումը Պարթևական հաղթակամարի վրա՝ ըստ Օգոստոս կայսեր մ. թ. ա. 19 – 16 թթ. հաղթադրամների (*ռուս.*) 27

Մաքսիմ Եվադեան

Հայոց թագուհի Էրատոյի մասին. պատմական և դրամագիտական ուսումնասիրություն (*անգլ.*) 38

Մաքսիմ Եվադեան, Հովանն Սիմոնեան

Մարիամ Կարսեցու չհրապարակված կնիքը և Բագրատունիների տան՝ Դավիթյան ծագման հավակնությունը (*անգլ.*) 47

Շահէն Յովսէփեան

Պարսկական դրամներ՝ թողարկված Երևանում (*հայ.*) 55

Ռոբեն Վարդանյան, Արմինե Զոհրաբյան, Համլետ Պետրոսյան

Դրամներ Արցախի Տիգրանակերտի պեղումներից (*հայ.*) 74

Ռոյ Առաքելյան

Ակնարկ Տիգրան II-ի դրամական թողարկումների ժամանակագրության մասին (*անգլ.*) 87

Մեյեդ Օմիդ Մոհամմադի, Սաիդ Սոլեյմանի

Հատվել է Իրանի Հյուսիսում. «Մուհր» մակադրոշմներ արծաթե դրամների վրա (*անգլ.*) 95

Վեռա Բոյան

Հայաստանից գտնված Հնդկաստանի Մեծ մողոլների դրամները և դրանց դերը միջազգային առևտրում (*հայ.*) 106

Վլադիմիր Գորոնչարովսկի, Անդրեյ Տերեշչենկո

Տավրիկյան Խերսոնեսի հարավային արվարձանում հայտնաբերված՝ բյուզանդական կայսր Արտավազդի հազվագյուտ սեմիսի մասին (*ռուս.*) 114

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ալեքսանդր Հակոբյան, Լուսինե Ղուշչյան

Մետաղադրամը իրերի վրա. Ռուսաստանի ազգագրական թանգարանի հավաքածուից չորս հայկական զարդերի դրամագիտական վերլուծություն (*անգլ.*) 122

Աստղիկ Իսրայելյան

Դրամների մոգական և գեղագիտական արժեքները (*հայ.*) 132

Արտակ Ասատրյան

Պղնձարդյունաբերությունը և պղնձագործությունը Արևելյան Հայաստանում 19-րդ դարի երկրորդ կեսին – 20-րդ դարի սկզբին (Պատմաազգագրական համառոտ ուրվագիծ) (*հայ.*) 152

Լիլիա Ավանեսյան, Վեռա Բոյան

Գորգը և տեքստիլ ապրանքները Ռուսաստանի հետ հայ վաճառականների առևտրում 17-րդ դարի կեսին – 18-րդ դարի սկզբին (*ռուս.*) 166

Կարինե Բազեյան, Գրիգոր Աղանյան

Մետաղադրամը որպես զարդ Բարձր Հայքի և Շիրակի կանանց ավանդական հագուստի համալիրում (*հայ.*) 180

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Աշոտ Մանուչարյան

Դրամական անվանումների արտացոլումը հայկական վիմագրերում (*հայ.*) 190

Արմինե Ջոհրաբյան, Բորիս Գասպարյան, Անի Ադիգյոզալյան

Կշռաքար՝ հայտնաբերված Արտաշատ մայրաքաղաքի տարածքից (*հայ.*) 206

Ռոբերտո Դան, Անանարիտա Ս. Բոնֆանտի

Նախնական դիտարկումներ Հայաստանի պատմության թանգարանում պահվող Ուրարտական թագավորական թասերի նոր ուսումնասիրության մասին (*անգլ.*) 217

Հայկ Ավետիսյան, Արտակ Գնունի, Արսեն Բոբոխյան, Գագիկ Սարգսյան, Լևոն Մկրտչյան

Ճանապարհային ցանցի գործարկումը բրոնզ-երկաթեդարյան Սյունիքում՝ խոշոր բնակավայրային ագլոմերացիաների գոյության պայմաններում (*հայ.*) 225

ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ

Ժիրայր Քրիստրիանեան

Ռոբերտ Վ. Էդվարդսի հայկական և հարակից մինչհետմիջնադարյան ժամանակաշրջանի դրամների հավաքածուն՝ Կիլիկիայում գտածոների վայրերի փաստագրված տվյալներով (*անգլ.*) 242

Ռոբեն Վարդանյան, Արմինե Ջոհրաբյան, Հասմիկ Հովհաննիսյան

Ոչ թանգարանային դրամագիտական թվային շտեմարան թանգարանում (*հայ.*) 260

Զարուհի Բարսեղյան

«Պահպանելով անցյալը և ներկայացնելով ներկան՝ կառուցում ենք ապագան». ՀՀ կենտրոնական բանկի այցելուների կենտրոն (*հայ.*) 267

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ 271

DOI:10.56653/18290361-2023.12-267

«ՊԱՀՊԱՆԵԼՈՎ ԱՆՑՅԱԼԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՎ ՆԵՐԿԱՆ՝ ԿԱՌՈՒՑՈՒՄ ԵՆՔ ԱՊԱԳԱՆ». ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Ներածություն

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի այցելուների կենտրոնը թանգարան-կրթական համալիր է, որի նպատակն է հանրությանը (աշակերտներ, ուսանողներ, ուսուցիչներ, դասախոսներ, քաղաքացիներ) հիմնական, թեմատիկ և ժամանակավոր ցուցադրությունների, տարաբնույթ կրթական գործիքների միջոցով ներկայացնել Հայաստանի տարածքում դրամաշրջանառության պատմությունը և ՀՀ կենտրոնական բանկի գործառույթները:

Ստեղծման պատմությունը

ՀՀ կենտրոնական բանկը որոշակի հաճախականությամբ պատվիրում է սոցիոլոգիական հարցումներ՝ բացահայտելու իր գործունեության վերաբերյալ առկա կարծրատիպերը, դրական և բացասական կողմերը: Այդ հարցումների արդյունքները թույլ են տալիս ճշգրտել PR քաղաքականությունը և սկսել նոր նախագծեր: 2006 թ. անցկացված հարցումը բացահայտեց 2 հիմնական խնդիր.

ԽՍՀՄ պլանային տնտեսության փլուզումից հետո առկա է անվստահություն ֆինանսական համակարգի նկատմամբ: Դա պայմանավորված է ոչ միայն այն հանգամանքով, որ տնտեսական անկումը աղետալի էր, այլ նաև նրանով, որ քաղաքացիներն ուղղակի չգիտեն՝ ինչպես է աշխատում շուկայական տնտեսությունը, ինչպես են ձևավորվում արժույթների փոխարժեքները, ինչ է գնաճը, ինչու է տեղի ունենում, ինչպես են դա հաշվում, ինչու են բանկերը սնանկանում, և ինչով է ի վերջո զբաղվում Կենտրոնական բանկը:

ՋԼՄ-ների միջոցով քաղաքացիներին տեղեկատվություն փոխանցելու ստանդարտ գործիքները չեն կարող լուծել այս խնդիրը, անհրաժեշտ է շտապ և հանգամանորեն զբաղվել կրթության հարցերով, հատկապես որ, որոշակի հանգամանքներից ելնելով, հենց Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում են կուտակվել նոր տնտեսական գիտելիքները: Պարզ է նաև, որ նոր կրթությունը պետք է լինի հետաքրքիր և ոչ ձանձրալի:

Միաժամանակ, Կենտրոնական բանկի կողմից ինտենսիվ ուսումնասիրվել է մի շարք երկրների՝ Ֆինլանդիայի, Նիդերլանդների, Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի, Բելգիայի, Չեխիայի, Լատվիայի կենտրոնական բանկերի մեր գործընկերների փորձը՝ բացահայտելով մի շատ հետաքրքիր հանգամանք՝ տնտեսությանը վերաբերող հիմնահարցերը դպրոցական տարիքից դասավանդելու անհրաժեշտության

խնդրին բախվում են ոչ միայն հետխորհրդային երկրների կենտրոնական բանկերը, այլև զարգացած շուկայական տնտեսություն ունեցող երկրները: Այդ խնդիրների լուծման՝ մեր գործընկերների կողմից առաջարկվող լավագույն տարբերակը յուրահատուկ կրթական հարթակների՝ Փողի թանգարանների/ այցելուների կենտրոնների ստեղծումն է, որի համար նրանք ահռելի ֆինանսական միջոցներ են ծախսում: Հաշվի առնելով միջազգային լավագույն փորձը և Հայաստանի ֆինանսական, տնտեսական համակարգի կառուցվածքային առանձնահատկությունները՝ ՀՀ ԿԲ խորհուրդը 2007 թ. վերջին հաստատեց Այցելուների կենտրոնի հայեցակարգը, իսկ առաջին այցելուներին ՀՀ ԿԲ այցելուների կենտրոնն ընդունեց 2011 թ. սեպտեմբերի 22-ին:

Ստեղծման նպատակը

Հայաստանի անկախության տարիների ընթացքում ՀՀ կենտրոնական բանկը կուտակել է դրամագիտական հարուստ հավաքածու՝ ներառելով Հայաստանի դրամական շրջանառության ողջ պատմությունը: Հայաստանում դրամի ներթափանցման առաջին վկայությունները վերաբերում են մ. թ. ա. VI – V դդ.: Պատմությունը բավականին լավ ներկայացված է Հայաստանի պատմության, Երևան քաղաքի պատմության և այլ թանգարաններում. այդ դեպքում ինչո՞վ է տարբերվում ԿԲ այցելուների կենտրոնն այդ թանգարաններից: Իհարկե, Կենտրոնի մշտական ցուցադրությունն ամբողջական է՝ կենտրոնացած դրամի պատմության թեմայի վրա, բայց հիմնական տարբերությունն այն է, որ Այցելուների կենտրոնը կրթական հարթակ է, որտեղ այցելուները կարող են գիտելիքներ ձեռք բերել ինչպես փողի պատմության, այնպես էլ ժամանակակից տնտեսության, Կենտրոնական բանկի գործառույթների, շուկայական տնտեսությունում ֆինանսական համակարգի գործունեության մասին: Այս թանգարանը, ինչպես և աշխարհում առաջին թանգարանը՝ Մուսեյոն տաճարը, որը հիմնադրվել է Ալեքսանդրիայում Պտղոմեոս I-ի կողմից մ. թ. ա. III դարում, մի կրթական հաստատություն է, որտեղ պահպանվում է անցյալը, ներկայացվում է ներկան, կառուցվում՝ ապագան:

Այցելուների կենտրոնը, հիմնադրումից ի վեր, իր առջև դրել է երկու հիմնական նպատակ.

Հայաստանի դրամաշրջանառության և Կենտրոնական բանկի պատմության, ԿԲ հիմնական գործառույթների և գործունեության հանրահռչակում:

Երիտասարդների ֆինանսական գրագիտության մակարդակի բարձրացում:

Կենտրոնի ընդհանուր կառուցվածքը

Այցելուների կենտրոնը տեղակայված է ՀՀ կենտրոնական բանկի պատմական մասնաշենքում (Երևան, Վ. Սարգսյան 6, կառուցվել է 1933 թ.): Ցուցադրությունը զբաղեցնում է 2 հարկ՝ 500 քառ. մետր ընդհանուր տարածքով: Կենտրոնի շինարարական և ձևավորման աշխատանքները տևել են գրեթե չորս տարի, տարածքը հարմարեցված է նաև հենաշարժական խնդիրներ ունեցող այցելուների համար:

Այցելուների կենտրոնի կառուցվածքը կարելի է բաժանել երեք մասի.

1. Ներկայացված է Հայաստանի դրամաշրջանառության պատմությունը՝ սկսած նախադրամական շրջանից մինչև Հայաստանի երրորդ հանրապետության դրամանիշների և հուշադրամների, ինչպես նաև Հայաստանի բանկային համակարգի պատմությունը: Ցուցադրված են բնօրինակներ, որոնք Կենտրոնական բանկը գնել է քաղաքացիներից կամ ստացել որպես նվեր (շուրջ 1000 դրամագիտական արժեք):

2. Ներկայացված են ՀՀ կենտրոնական բանկի հիմնական գործառույթները.

Ցուցադրության այս հատվածում ներկայացվող ֆինանսական թեմաներն են՝ գների ու ֆինանսական համակարգի կայունության ապահովումը, ինչպես նաև Հայաստանի ֆինանսական համակարգի կառուցվածքը: Այս ամենը բացատրվում է շատ մատչելի և ամրապնդվում խաղերի ու հարց-պատասխանի միջոցով: Կենտրոնի գլխավոր գաղափարն է՝ այստեղ պարտադիր չէ լինել տնտեսագետ: Կենտրոնի աշխատակիցները տեղեկացնում են, թե ինչով է զբաղվում Կենտրոնական բանկը, ինչ գործառույթներ ունի, ինչ խնդիրներ է լուծում, նաև՝ ինչպես ընտրել ավանդի տեսակ, վարկ կամ վճարային քարտ վերցնելիս ինչին ուշադրություն դարձնել: Փողի հետ կապված բազմաթիվ հարցեր կան, որոնց պարզաբանման կարիքը մարդիկ ունեն:

3. Հետադարձ կապ ստանալու խաղային գոտի.

Ցուցադրվող վահանակներից բացի՝ Կենտրոնը հագեցած է նաև ինտերակտիվ գոտիներով՝ դրամանիշերի ստուգման լաբորատորիա, բանկոմատ, մուլտիմեդիային խաղեր, ազգային դրամի պատմության և գործառույթների մասին տեսաֆիլմեր, գների և ֆինանսական կայունությունը, ֆինանսական համակարգի գործունեությունը բացատրող մուլտֆիլմեր, ինչպես նաև թեմատիկ տեսահոլովակներ:

ՀՀ կենտրոնական բանկը դրամագիտական մեծ հավաքածու (ավելի քան 2200 դրամագիտական արժեք) է ցուցադրում նաև Դիլիջանում (ՀՀ կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի առաջին հարկ, ք. Դիլիջան, Մաքսիմ Գորկու 29):

Կենտրոնի գործունեությունը

Մշտական ցուցադրությունից զատ՝ Այցելուների կենտրոնը պարբերաբար (տարին 1–2 անգամ) կազմակերպում է շրջիկ ցուցադրություններ ՀՀ մարզերում (Գավառ, Աշտարակ, Արտաշատ, Հրազդան, Արմավիր, Վանաձոր, Կապան, Գյումրի, Իջևան, Եղեգնաձոր քաղաքներում), ինչպես նաև ամեն տարի միանում է Թանգարանների գիշեր և Թանգարանների միջազգային օր ծրագրերին: 2016 թ. սեպտեմբերի 2-ին ՀՀ կենտրոնական բանկի կողմից կազմակերպվող արտագնա ցուցահանդեսների շրջանակում Արցախում՝ Ստեփանակերտում, բացվեց «Հայաստանի դրամաշրջանառության պատմությունը. ֆինանսներ բոլորի համար» ցուցահանդեսը: Այն առանձնահատուկ էր նրանով, որ այցելուներին հնարավորություն էր տալիս ծանոթանալու նաև պատմական մեծ արժեք ներկայացնող՝ Արցախի տարածքում հատված մետաղադրամներին, ԼՂՀ ժամանակակից հուշանվերային թղթադրամներին և մետաղադրամներին, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը նվիրված ՀՀ հուշադրամներին:

ՀՀ ԿԲ այցելուների կենտրոնը ձևավորված է ժամանակակից ոճով, բաց է հասարակության համար, անվճար է: Այցելուների ընդհանուր թիվը Երևանում և Դիլիջանում կազմում է տարեկան շուրջ 15 հազար: Կենտրոն այցելում են ինչպես ոլորտի մասնագետներ, օտարերկրյա հյուրեր, այնպես էլ քաղաքացիներ, որոնք հետաքրքրված են դրամանիշերի պատմությամբ, Կենտրոնական բանկի գործունեությամբ, դրամավարկային քաղաքականությամբ: Միևնույն ժամանակ, կենտրոնում կազմակերպվում են հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ, թեմատիկ դասախոսություններ, այցելություններ հատուկ խմբերի համար: Էքսկուրսիաներն անցկացվում են հայերեն, ռուսերեն և անգլերեն, իսկ ցուցադրված նյութը երկլեզու է՝ հայերեն և անգլերեն:

Եզրակացություն

Այսպիսով՝ այցելուների կենտրոնը եզակի հարթակ է, որը նպաստում է երիտասարդների տնտեսապես կրթվածությանը, ինչը կարող է պարարտ հող ստեղծել տնտեսական բարեփոխումների առավել հաջող իրականացման համար:

Զարուհի Բարսեղյան
Հայաստանի Հանրապետության կենտրոնական
բանկի այցելուների կենտրոն

Զարուհի Բարսեղյան

«ՊԱՀՊԱՆԵԼՈՎ ԱՆՑՅԱԼԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՎ ՆԵՐԿԱՆ՝ ԿԱՌՈՒՑՈՒՄ ԵՆՔ ԱՊԱԳԱՆ». ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Նկար 1. Այցելուների կենտրոն, ընդհանուր պատկեր

Նկար 2. Այցելուների կենտրոն, ընդհանուր պատկեր

Նկար 3. Հայաստանի դրամաշրջանառության պատմությունը մ.թ.ա. 7-րդ դարից մինչև մ.թ. 19-րդ դար

Նկար 4. Հայաստանի Հանրապետության թղթադրամներ և մետաղադրամներ

Նկար 5. Դրամավարկային քաղաքականություն

Նկար 6. Ֆինանսական համակարգ և վերահսկողություն/Ֆինանսական համակարգի հաշվարար/ Ավանդների հավաքագումը երաշխավորող հիմնադրամ

Նկար 7 Այցելուների կենտրոնի խաղասրահ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ